DOI: 10.54503/978-9939-9312-4-1-16

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ–ՈՒՄ

ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ
ՄԵՐԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Ներածություն: Հանրահայտ է, որ տնտեսական աճը համընդհանուր տնտեսական զարգացման կարևորագույն ցուցանիշն է և ունի ոչ միայն սոսկ սոցիալ-տնտեսական բովանդակություն, այլ նաև՝ քաղաքական նշանակություն: Վերջինս է, թերևս, պատճառը, որ խիստ կարևորվում է այդ ցուցանիշի շարժը դեպի վերև, սակայն նույնքան չի արժևորվում աճի որակը: Հավանաբար այն ենթադրությամբ, որ ազատ շուկայական տնտեսության պայմաններում պահանջարկն է որոշում առաջարկի բովանդակային և կառուցվածքային ցուցանիշները, հատկապես մակրոմակարդակում: Անշուշտ, դա ճշմարիտ է համընդհանուր (գլոբալ) առումով, բայց առանձին երկրներում պահանջարկը կարող է բավարարվել ներմուծման հաշվին, իսկ նրանց արտադրության ծավալներն ու կառուցվածքը չլինեն արդիական թե՛ ամբողջական պահանջարկի ապահովման, թե՛ գիտատեխնոլոգիական զարգացման առումներով: Ահա թե ինչու էական է հետազոտել և կարևորել տնտեսական աճի ոչ միայն վիճակագրական, այլ նաև բովանդակային հայտանիշերը՝ այսինքն որակը՝ տնտեսական զարգացման ընթացքը առավել համալիր գնահատելու համար*: Մանավանդ արհեստական բանականության դարաշրջանում, երբ ընթացքի մեջ է հինգերորդ տեխնոլոգիական հեղափոխությունը, գիտությունը և առաջադիմական տեխնոլոգիաները դարձել են քաղաքակրթական առաջընթացի կարևորագույն գործոնները, մասնավորապես՝ նաև պետության հզորության ապահովման համար, քանի որ դրանք են որոշում երկրի տնտեսության ու զինված ուժերի ներուժը:

1. Տնտեսական աճի որակի և արդյունավետության փոխառնչությունները

Տնտեսագիտական գրականության մեջ և բանավոր խոսքում օգտագործվում են «տնտեսական զարգացում», «տնտեսական աճ» արտահայտությունները, որոնցից վերջինս ավելի նեղ է իր իմաստով, քանի որ չի արտահայտում աճի բուն բովանդակությունը, այսինքն՝ այն, թե ինչ է ստեղծվում՝ իրական ապրանքներ, թե ծառայություններ, տեխնոլոգիական առումով ինչպես են դրանք ստեղծվում, ինչպիսին է դրանց մրցունակությունը և օգտակարությունը: Մեծ մասամբ տնտեսական զարգացումը մակրոմակարդակում բնութագրվում է աճի տեմպերով՝ տարբեր հաջորդող ժամանակահատվածներում ՀՆԱ ծավալի

* Այս հիմնախնդրին հակիրճ անդրադարձ առաջին անգամ կատարվել է առաջին հեղինակի «Տնտեսական զարգացման որակական բնութագրիչները և գերակայությունները» հոդվածում (Լրաբեր հասարակական գիտությունների, 2019, թ.2):

հարաբերությամբ[1]: Ուստի աճի տեմպերը կարող է դիտարկվել սոսկ որպես վիճակագրական հաշվարկի արդյունք, սակայն էական է կարևորել դրա նյութական բովանդակությունը և ապահովման տեխնոլոգիական կառուցա-կարգը, որոնց ամբողջությունը կարող է բնութագրել տնտեսական աճի որակը:

Այդ տեսանկյունից տնտեսագիտական գրականության մեջ ընդգծվում է տնտեսական աճի որակի գնահատման կարևորությունը, որը հաշվի է առնում դրա ներառականությունը և կայունությունը, արտադրողականությունը, զբաղվածության որակը և մարդկային զարգացումը:

Տնտեսական աճի որակի գնահատման մոտեցումներից են.

1. Ներառականությունը նշանակում է, որ աճը պետք է բաշխվի հասարակության տարբեր շերտերի վրա: Եկամուտների բաշխումը բնութագրող ցուցանիշներ. Ջինի գործակիցն ու Լորենցի կորը եկամուտների անհամա-չափությունը բնութագրող ավանդական ցուցանիշներն են: Ատկինսոնի կողմից մշակվել է մեթոդաբանություն, որը գնահատում է եկամուտների բաշխումն ու դրա հետևանքները հասարակության բարեկեցության վրա[2]: Ատկինսոնն ու Ստիգլիցն իրենց աշխատություններում կարևորում են ներառականության որպես աճի սահմանային ասպեկտի դերը, իսկ Կլասենը պնդում է, որ եկամուտների անհամաչափ բաշխման վրա կենտրոնանալով ու հաշվարկելով օրինակ Ջինի գործակիցը կամ աղքատության մակարդակը՝ թույլ կտա գնահատելու արդյոք երկրի տնտեսական աճը լայնորեն է բաշխվել, թե ոչ:

2. Էկոլոգիական ազդեցության գնահատում. “Էկոլոգիական հետք”-ը և “Ածխածնային ինտենսիվությունը” օգտագործվում են էկոլոգիական կայունութ-յան գնահատման նպատակով: Պիրսն ու Թրները ներմուծել են կայուն զարգաց-ման հայեցակարգը, մատնանշելով, որ աճը չպետք է ապահովվի շրջակա միջավայրի առողջության հաշվին[3]: Դասգուպտան էլ ավելի է ընդլայնել այս գաղափարը՝ տնտեսական վերլուծություններում ներմուծելով բնական կապիտալի գաղափարը[4]: Իսկ Դալին իր աշխատությունում կարևորում է խիստ կայունությունը, որը պահաջում է գալիք սերունդներին շրջակա միջավայրի ծառայելու կարողությունը չխաթարվի ու պահպանվի[5]:

---

[1] Самуэльсон П. А, Нордхаус В.Д., Экономика, М., «Лаборатория базовых знаний», 2000, с. 570-579:

[2] Atkinson, A.B. (1970) On the Measurement of Inequality. Journal of Economic Theory, 2, 244-263.
http://dx.doi.org/10.1016/0022-0531(70)90039-6

[3] Pearce, D., & Turner, R. K. (1990). Economics of natural resources and the environment. Baltimore: Johns Hopkins University Press.

[4] Dasgupta, P. (2001). Human Well-Being and the Natural Environment. Oxford University Press.
https://doi.org/10.1093/0199247889.001.0001

[5] Daly, H.E. (1996) Beyond Growth, The Economics of Sustainable Development. Beacon Press, Boston.

3. Կոստանզայի և մի շարք այլ հեղինակների կողմից կարևորվել է էկոհամակարգային ծառայությունների և էկոլոգիական դեգրադացման հաշվառումը տնտեսական աճի գնահատման ժամանակ[6]:

4. Արտադրողականության ցուցանիշներ. Սոլոուն և մի շարք այլ հեղինակներ ուսումնասիրել են, թե ինչպես է արտադրողականության բարելավումը բերում երկարաժամկետ տնտեսական աճի[7]: ՀՆԱ-ի մեծությունը մի աշխատաժամի հաշվով, ամբողջական գործոնային արտադրողականությունը և նմանատիպ այլ ցուցանիշներ են օգտագործվում տնտեսական աճը արտադրողականության տեսանկյունից դիտարկելիս: Կալդորը[8] և Յորգենսոնը[9] իրենց աշխատություններում առաջարկում են արտադրողականության աճի չափման ու վերլուծման մեթոդաբանություններ:

5. Զբաղվածության որակի ցուցանիշներ. Զբաղվածություն/բնակչություն հարաբերության գործակիցը, Միջին աշխատավարձը, Աշխատատեղերի կայունության ցուցիչները կիրառվում են զբաղվածության որակի գնահատման համար: Այս մասով մանրամասն ուղեցույց ու չափիչներ է մշակվել Աշխատուժի միջազգային կազմակերպության կողմից[10]: Ֆրիդմանն ու Բեքերը ընդգծում են, որ աշխատատեղերի ստեղծումը պիտի ուղեկցվի նաև աշխատատեղերի որակի բարելավմամբ[11], իսկ այլ հեղինակներ կարևորում են նաև աշխատատեղերի կայունությունն ու աշխատավարձի աճի հարցադրումները[12]:

6. Մարդկային զարգացումը. Մարդկային Զարգացման Ինդեքսը (ՄԶԻ), մշակված ՄԱԿ-ի կողմից, համատեղում է կյանքի տևողության, կրթության ու մեկ շնչի հաշվով եկամուտների ցուցանիշները՝ աճի որակի մասին

---

[6] Costanza, R., d'Arge, R., de Groot, R. et al. The value of the world's ecosystem services and natural capital. Nature 387, 253–260 (1997). https://doi.org/10.1038/387253a0

[7] Solow, R. M. (1957). Technical Change and the Aggregate Production Function. The Review of Economics and Statistics, 39(3), 312–320. https://doi.org/10.2307/1926047

Mankiw NG, Romer D, Weil D. A Contribution to the Empirics of Economic Growth. Quarterly Journal of Economics. 1992;107 (May) :407-437.

[8] N. Kaldor.Causes of the Slow Rate of Economic Growth of the UnitedKingdom. An Inaugural Lecture.London, Cambridge UniversityPress, 1966, 40 p., 5/– net in U.K.

[9] Jorgenson, Dale. Productivity, Volume 1: Postwar U.S. Economic Growth. The MIT Press, 1995.

[10] World Employment and Social Outlook: Trends 2016, International Labour Office – Geneva: ILO, 2016, https://www.ilo.org/publications/world-employment-and-social-outlook-trends-2016

[11] Becker, G.S. (1964) Human Capital: A Theoretical and Empirical Analysis, with Special Reference to Education. University of Chicago Press, Chicago.

Friedman, M. (1962). Capitalism and freedom. Chicago: University of Chicago Press.

[12] Blanchard, Olivier, and Lawrence F. Katz. 1999. "Wage Dynamics: Reconciling Theory and Evidence." American Economic Review, 89 (2): 69–74. DOI: 10.1257/aer.89.2.69

ամբողջական պատկեր կազմելու նպատակով[13]: Մարդկային զարգացման համատեքստում Սենը մշակել է «Մարդկային զարգացման մոտեցումը», որտեղ առողջությունը, կրթությունը և եկամուտները դիտարկվում են որպես տնտեսական աճի առանցքային բաղադրիչներ[14]:

7. Տնտեսության դիվերսիֆիկացիայի ինդեքսներ. Դիվերսիֆիկացիայի ինդեքսները վերաբերվում են տնտեսական գործունեության տարբեր տեսակների կազմին ու կառուցվածքին, տարածմանը և բնութագրում են տնտեսության «ամրությունը/դիմացկունությունը»: Հերֆինդալ-Հիրշմանի և Դիվերսիֆիկացիայի գործակցի ցուցանիշները գնահատում են տնտեսական գործունեության տարբեր տեսակների տարածման վիճակը: Հիդալգոյի աշխատություններում քննարկում է տնտեսության դիվերսիֆիկացիան գնահատող կոմպլեքսության ցուցիչները[15]: Ռոդրիկն էլ իր աշխատություններում պնդում է, որ տնտեսության դիվերսիֆիկացիան նվազեցնում է արտաքին շոկերի նկատմամբ խոցելիությունը և նպաստում կայուն աճին[16]:

Ըստ Կապրայի և Հենդերսոնի «տնտեսության վիճակը չմշակված ՀՆԱ-ի թվերով գնահատելու փոխարեն, մենք պետք է տարբերակենք «լավ» աճը «վատ» աճից, ապա մեծացնենք առաջինը երկրորդի հաշվին, որպեսզի վատնվող և անապահով արտադրական գործընթացներում ներգրավված բնական և մարդկային ռեսուրսները կարողանան ազատվել և վերամշակվել որպես արդյունավետ և կայուն գործընթացների ռեսուրսներ»[17]:

Գրականության մեջ կա նաև տեսակետ, որ տնտեսական աճի որակը որոշվում է այն գնով, որով հասարակությունն ապահովել է այդ աճը[18]: Ակնհայտորեն նման մոտեցմամբ կարող է գնահատվել ոչ թե աճի որակը, այլ արդյունավետությունը, որը, ինչպես հայտնի է, գնահատվում է որոշակի ժամանակահատվածում ստացված արդյունքների և կատարված համընդհանուր ծախսերի հարաբերակցությամբ[19]: Ի դեպ, բովանդակային առումով այս ցուցանիշը նույնքան թերի է, որքան տնտեսական աճը, եթե իբրև արդյունքային ցուցանիշ կիրառվում է նույն վիճակագրական մեծությունը, որը չի արտացոլում տնտեսական զարգացման որակը: Ավելի լայն ընկալմամբ՝ «տնտեսությունը

---

[13] UNDP (United Nations Development Programme). 1990. Human Development Report 1990: Concept and Measurement of Human Development. New York.

[14] Sen A. Development as Freedom. New York: Alfred Knopf; 1999., http://www.c3l.uni-oldenburg.de/cde/OMDE625/Sen/Sen-intro.pdf

[15] C. A. Hidalgo et al. ,The Product Space Conditions the Development of Nations.Science317,482-487(2007).DOI:10.1126/science.1144581

[16] Rodrik, D. (2008) The Real Exchange Rate and Economic Growth. Brookings Papers on Economic Activity, Vol. 2, 365-412. http://dx.doi.org/10.1353/eca.0.0020
Hausmann, Ricardo & Rodrik, Dani, 2003. "Economic development as self-discovery," Journal of Development Economics, Elsevier, vol. 72(2), pages 603-633, December.

[17] Fritjof Capra and Hazel Henderson, Outside insights: Qualitative Growth, 2013, p. 10

[18] Лопатников Л. И, Экономико-математический словарь, М., Дело, 2003, с. 419

[19] Мескон М., Альберт М., Хедоури Ф., Основы менеджмента. М., “Дело”, 2000, с. 48-50

արդյունավետ է, եթե այն ի վիճակի է ապահովել սպառողներին նրանց համար առավել նախընտրելի ապրանքների և ծառայությունների հավաքածուով՝ տեխնոլոգիայի առկա մակարդակի և ռեսուրսների քանակի պայմաններում»[20]:

Արդյունավետության բերված վերջին ձևակերպումը, որը հայտնի է նաև որպես Պարետոյի օպտիմալության չափանիշ[21], տնտեսական աճի համար ունի համալրող և չափանիշային նշանակություն՝ ուղղորդված աճի որակին:

Տնտեսագիտական տրամաբանությամբ տնտեսական աճի որակը, վերը նշված բաղադրիչներից բացի, պայմանավորված է որոշ էական գործոններով, մասնավորապես՝

- ըստ ռեսուրսների աճի բնույթով, այսինքն այն ապահովվել է նոր աշխատանքային և հիմնական (կապիտալ) ռեսուրսների ներգրավմամբ, թե դրանց օգտագործման արդյունավետության բարձրացմամբ: Աճի որակը դիտվում է բարձր, եթե այն ապահովվել է ինտենսիվացման, ոչ թե ռեսուրսների ընդլայնման շնորհիվ,
- տնտեսական զարգացման կառուցվածքը, այսինքն՝ արդյունքաստեղծման բաղադրիչների հարաբերակցությունը: Դրանք կարող են լինել բարդ տեխնոլոգիական գործընթացների արդյունք կամ վաղուց հայտնի տեխնոլոգիաների և կոմունալ-կենցաղային, առևտրական ծառայությունների արգասիք: Երկրորդ դեպքում չի պահանջվում բարձր որակավորման կադրեր և որ առավել կարևոր է՝ չի բովանդակում հեռանկարային տեխնոլոգիական զարգացման ներուժ,
- կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալում նորամուծական ծրագրերը ապահովող ներդրումների տեսակարար կշիռը,
- նպաստումը պետության զինված ուժերի մարտունակության բարձրացմանը, նույնն է թե՝ պետության հզորացմանը: Խնդիրը վերաբերում է նրան, թե արդյոք արտադրանքի բարձր գիտատարությունը զուգորդվում է զարգացած ռազմաարդյունաբերական համալիրի գոյության հետ,
- տնտեսական համակարգի առաջադիմականությունը և թողարկվող արտադրանքի (ծառայությունների) միջազգային մրցունակությունը:

Տնտեսական զարգացման որակի առումով մակրոմակարդակում համախառն ներքին արդյունքի կառուցվածքը արտահայտում է թողարկվող արտադրանքի և ծառայությունների տեսականին և յուրաքանչյուրի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում: Սակայն դրանք զուտ վիճակագրական տեղեկություններ են, որոնք կարող են հնարավորություն ընձեռել կատարելու բովանդակային նշանակության և էական հետևյալ դիտարկումները, որոնք բխում են արդյունավետ տնտեսության վերը բերված բնորոշումից.

---

[20] Самуэльсон П. А, Нордхаус В.Д., Экономика, М., «Лаборатория базовых знаний», 2000, с. 178

[21] Блэк Дж, Экономика: толковый словарь, М., ИНФРА-М, 2000, с. 540

- ինչքանով է ապահովվում սեփական արտադրության հաշվին երկրի պահանջարկը արտադրանքի և ծառայությունների նկատմամբ, այսինքն՝ ինչպիսին է ինքնաբավության մակարդակը,
- ինչպիսին է երկրում թողարկվող արտադրանքի և ծառայությունների որակական մակարդակը, ըստ այդմ՝ ՀՆԱ կառուցվածքը կանխորոշում է արտաքին տնտեսական հարաբերությունների բնույթը՝ արտահանման ու ներմուծման ծավալային և կառուցվածքային ցուցանիշներով,
- ինչպիսին է արտադրության տեխնոլոգիական և գիտատարության մակարդակը, ինչը կարող է գնահատել երկրում տնտեսության, գիտության ու նորամուծությունների առնչությունների իրական վիճակը և հիմնախնդիրները:

Հանրային գործունեությունը որպես ամբողջական համակարգ մակրոմակարդակում կարող է ներկայացվել իբրև որոշակի կարևորագույն ենթահամակարգերի փոխգործողություն: Այդպիսի առաջնային նշանակության ենթահամակարգեր են գիտությունը, տնտեսությունը, կրթությունը, ներքին և հատկապես արտաքին անվտանգության ապահովումը, հանրային գործունեության կառավարումը: Մարդկային քաղաքակրթության ողջ ընթացքում գիտության զարգացման արդյունքում ստեղծվել են նոր տեխնոլոգիաներ, աշխատանքի գործիքներ, արտադրանքի տեսակներ, որոնք ուղեկցվել են արդյունաբերական հեղափոխությամբ: Այսօր էլ՝ արհեստական բանականության ժամանակաշրջանում ակնհայտ է, որ հանրային գործունեության մեջ որոշիչը գիտության ազդեցությունն է, որից ածանցվում են մյուս ենթահամակարգերի աշխատանքի արդյունքները, որոնց առնչությունները փոխադարձ են, սակայն դրանցում առաջնայինը գիտության նվաճումները և դրանց կիրառություններն են,

- ապահովվում է, արդյոք, երկրի արտաքին անվտանգության երաշխավորման, զինված ուժերի մարտունակության բարձրացման կարևորագույն խնդրի լուծումը սեփական արտադրության շնորհիվ կամ ինչ չափով է այն բավարարում անհրաժեշտ կարիքները:

Ստորև կանդրադառնանք նշված դիտարկումների բովանդակային մեկնաբանությանը և հիմնախնդիրների անհրաժեշտ լուծումներին:

2. ՀՆԱ ճյուղային ու ծախսային բաղադրիչների կառուցվածքը և արտադրանքի (ծառայությունների) մրցունակությունը որպես տնտեսական զարգացման որակի ցուցանիշներ

Երկրի համախառն ներքին արդյունքի ճյուղային և ծախսային բաղադրիչների կառուցվածքը արտացոլում է տնտեսական զարգացման բովանդակությունը, միաժամանակ նաև՝ տնտեսության ընդլայնման ներուժը և մրցունակկությունը:

Հայաստանի Հանրապետության ՀՆԱ կառուցվածքը վերջին տարիներին բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով (աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

ՀՀ ՀՆԱ ճյուղային կառուցվածքը[22]

№	Տնտեսության ճյուղերը	ՀՆԱ ճյուղային կառուցվածքը ըստ տարիների, %		
		2017	2018	2023
1.	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն	15	13.7	8.4
2.	Հանքագործական արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում,	3.3	2.9	2.9
3.	Մշակող արդյունաբերություն	10.6	11.3	11.1
4.	Էլեկտրականություն, գազի գոլորշու և լավորակ օդի մատակարարում	4.1	3.7	2.6
5.	Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	0.5	0.5	0.4
6.	Շինարարություն	7.3	6.6	6.9
7.	Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլետների նորոգում	11.1	11.3	12.7
8.	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	3.0	3.2	9.9
9.	Կացության և հանրային սննդի կազմակերպում	1.4	1.8	2.3
10.	Տեղեկատվություն և կապ	3.3	3.2	5.5
11.	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	4.9	5.3	7.4
12.	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	7.8	7.9	8.3
13.	Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	1.1	1.2	1.4
14.	Վարչարարական և օժանդակ գործունեություն	0.9	1.0	0.8

[22] Armstatbank, Էկոնոմիկա և ֆինանսներ, Ազգային հաշիվներ, համախառն ներքին արդյունք, ԱՀՀ2008, ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ ԱՀՀ 2008 և տարիներ, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__1%20Econnomy%20and%20finance__15%20National%20Accounts__151%20SNA%202008__1511%20Annual%20data__15111%20Production%20of%20GDP/EF-NA-08AP02.px/table/tableViewLayout2/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb

15.	Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովագրություն	4.7	4.2	5.3
16.	Կրթություն	2.7	2.6	2.5
17.	Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	4.2	4.2	5.4
18.	Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	4.6	5.7	2.8
19.	Սպասարկման այլ ծառայություններ	0.9	0.9	0.7
20.	Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու, տնային տնտեսություններում չտարբերակված ապրանքների և ծառայությունների արտադրություն սեփական սպառման համար	0.1	0.1	0.0

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տեղեկատվության (աղյուսակ 1) գյուղատնտեսության և դրան հարակից ճյուղերի մասնաբաժինը ՀՆԱ-ում 2023 թ. կազմել է 8.4 տոկոս, արդյունաբերությունը (ներառյալ էներգետիկան), 17 տոկոս, շինարարությունը՝ 6.9, առևտրի և ծառայությունների տեսակարար կշիռը 59 տոկոս: Գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում նվազել է 2017-2018 թթ. մակարդակից (14-15%), որոշ չափով կրճատվել է նաև արդյունաբերության տեսակարար կշիռը (2017-ին 18 տոկոս): Նվազման միտում ունեն նաև կրթության և մշակույթի ցուցանիշները: Առևտրի և ծառայությունների մասնաբաժինն ունի աճի միտում. եթե 2021-ին այն կազմել էր 52.8%, ապա 2023-ին ավելացել է ավելի քան 6 տոկոսային կետով: Մշակող արդյունաբերության մասնաբաժինը 2017-2023 թթ. գտնվել է 10.6-11.1 տոկոսի միջակայքում, երբ մեծածախ և մանրածախ առևտրի տեսակարար կշիռը նույն ժամանակաշրջանում 11.1 տոկոսից հասել է 12.7-ի՝ ավելին, քան մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը: Բարվոք չէ նաև մշակող արդյունաբերության ներճյուղային կառուցվածքը (աղյուսակ 2): 2018-2022 թթ. սննդի արդյունաբերության բաժինը տատանվել է 58.5-63.3 տոկոսի շրջանակներում՝ անգամներով գերակշռելով մշակող արդյունաբերության բարձր և միջին գիտատար ճյուղերի արտադրության ծավալների նկատմամբ (քիմիական, էլեկտրատեխնիկական, մեքենաշինական արտադրատեսակներ):

Ըստ ՀՀ ՎԿ տեղեկատվության, 2023 թ. բարձր ու միջին տեխնոլոգիական մակարդակի արտադրանքի և ծառայությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 7.6%, ինչը առաջընթաց է նախորդ տարիների ցուցանիշի (4.5%) նկատմամբ: Ուշագրավ է նաև, որ տնտեսական հավելաճի մեջ ավելի մեծ նշանակություն ունեն առևտուրը և ծառայությունները (2023 թ. 6.7 տոկոսային կետ), քան արդյունաբերությունը և էներգետիկան (0.32), շինարարությունը (1.07), գյուղանտնտեսությունը (0.02): Նույնն էր պատկերը նաև նախորդ տարիներին:

Աղյուսակ 2.

ՀՀ մշակող արդյունաբերության ճյուղային կառուցվածքը[23]

№	Մշակող արդյունաբերության ճյուղերը	Մշակող արդյունաբերության կառուցվածքը ըստ տարիների, %			
		2018	2021	2022	2023
1.	Սննդամթերքի արտադրություն	38.8	38.8	37.7	33
2.	Խմիչքների արտադրություն	11.3	13.5	11.7	10.8
3.	Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	13.2	9	7.7	8.5
4.	Հագուստի արտադրություն	1.7	2.7	2.3	2.2
5.	Պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում	1.4	1.4	2.1	2.2
6.	Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	1.2	1	1.1	1.1
7.	Այլ, ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	4.6	6.4	12.9	11.9
8.	Հիմնական մետաղների արտադրություն	12.9	12.1	10.4	15.6
9.	Պատրաստի մետաղի արտադրատեսակների արտադրություն	1.1	0.9	1.2	1.4
10.	Էլեկտրական սարքավորանքի արտադրություն	1.1	1.6	0.8	1.2
11.	Այլ ճյուղեր	12.7	12.6	12.1	12.1

Հայտնի է, որ ՀՆԱ ծախսային բաղադրիչներն են սպառումը, պետական գնումները, ներդրումները և զուտ արտահանումը։ Դրանց թվում տնտեսական աճի ներուժ պարունակում է ներդրումների բաղադրիչը, որի շնորհիվ պետք է ստեղծվեն նոր արտադրական կարողություններ, ինչպես նաև սոցիալ-

[23] ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2022, էջ 310-311, Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2024, էջ 327-328

մշակութային հիմնական միջոցներ[24]: ՀՀ ՎԿ տվյալներով համախառն կուտակման մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմել է 2021-ին 19.7, 2022-ին՝ 19.4, 2023-ին՝ 21.3 տոկոս, որի մեծ մասը հատկացվել է հիմնական միջոցների ստեղծմանը (օրինակ, 2023 թ.՝ 20.7%)[25]: Այս ցուցանիշով ՀՀ-ն գտնվում է նորմատիվային շրջանակներում, քանի որ ընդունված է, որ ներդրումների հատվածը կազմում է 10-20%: Համախառն կուտակման նման ծավալները հիմք կարող են դառնալ կայուն տնտեսական աճի, հատկապես՝ արտադրական ոլորտի ընդլայնման համար: Սակայն նույն՝ 2023թ. շինարարական ծավալների կառուցվածքից պարզվում է, որ մշակող արդյունաբերության մասնաբաժինը շինարարական գործունեության ծավալում կազմել է 1.6 տոկոս, իսկ 46.1 տոկոսը հատկացվել է անշարժ գույքի ստեղծմանը: Բնակելի շենքերի տարածքը (քառ.մ.) 2023 թ. նախորդ տարվա նկատմամբ ավելացել է 2.2 անգամ: Որոշ չափով շինարարության տեսքով կապիտալ ներդրումներ են կատարվել արտադրական ենթակառուցվածքի ճյուղերում՝ էներգետիկայում (10.3%) և տրանսպորտում (18.1%), քանի որ առանց դրանց առևտուրն ու ծառայությունների ոլորտը չեն կարող գործել:

Ընդհանրացնելով շարադրանքը՝ հարկ է նկատել, որ տնտեսությունն արդյունավետ չէ առնվազն երկու պատճառաբանությամբ: Առաջին հերթին այն ինքնաբավ չէ: Ինչ խոսք, ըստ աշխատանքի միջազգային բաժանման սկզբունքի, յուրաքանչյուր երկիր պարտադիր չէ, որ ամեն ինչ արտադրի, կարող է իր պահանջմունքների մի մասն ապահովել ներմուծման հաշվին: Սակայն անվիճելի է, որ երկիրը պետք է ունենա ինչպես ժամանակակից տեխնոլոգիա-պես զարգացած արդյունաբերություն, այլ նաև պետության անվտանգությունն ապահովող ռազմարդյունաբերական համալիր:

Երկրորդ՝ երկրի տնտեսությունը ինտեգրում է իր բնակչության մտավոր-տեխնոլոգիական ներուժը և դրա արտացոլումն է: Այս առումով տնտեսության նկարագրված պատկերը չի համապատասխանում հայոց արդի մտավոր և գիտատեխնոլոգիական մակարդակին և ժամանակի պահանջներին: Վերջին 200 տարում, արդյունաբերական հեղափոխությունից հետո, ըստ Յու. Ն. Հարարիի, գիտությունն ու տեխնոլոգիաներն են որոշում հասարակական զարգացման ընթացքը: Ավելին, «ժամանակակից պետությունները յուրաքանչյուր պետական խնդրի լուծում փնտրելիս կանոնավոր դիմում են գիտնականներին՝ էներգետիկայից ու առողջապահությունից մինչև աղբահանություն...: Աշխարհի ռազմական ուժերն են նախաձեռնում, ֆինանսավորում ու որոշում մարդ-կության գիտական հնարավորությունների մի մեծ մասի ու տեխնոլոգիական զարգացման ուղղությունները»[26]:

---

[24] Самуэльсон П. А, Нордхаус В.Д., Экономика, М., «Лаборатория базовых знаний», с. 571

[25] ՀՀ ՎԿ, 2021,2022,2023 թթ-ի Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) եռամսյակային և տարեկան նախնական տվյալները, https://armstat.am/file/doc/99528978.pdf , https://armstat.am/file/doc/99536113.pdf. https://armstat.am/file/doc/99545118.pdf

[26] Հարարի Յու. Ն. Sapiens. Մարդկության համառոտ պատմություն, Ե., 2020, էջ 318-319

Հայաստանն անցյալ դարի 70-80-ական թվականներին, ժամանակի համար ուներ զարգացած սարքաշինություն, հաստոցաշինություն, էլեկտրատեխնիկական ու քիմիական արդյունաբերություն՝ ահապովված բարձր որակի ճարտարագետներով, տեխնոլոգներով և բարձրակարգ բանվորական մասնագետներով ու ճյուղային և ակադեմիական գիտական կառույցներով:

Բնականաբար այսօր խնդիրը տնտեսական նոր ռազմավարության ընդունումը և իրագործումն է: Դրական է, որ ունենք զարգացած ծառայությունների ոլորտ, բայց երկիրը անհրաժեշտաբար պետք է ունենա հեռանկարային տեխնոլոգիաներով հագեցած մշակող արդյունաբերություն, որը կնպաստի պետության հզորացմանը, երկրում կրթության և գիտության ավելի բարձր մակարդակով զարգացմանը*: Մանավանդ հարկ է, նաև հաշվի առնել, որ եթե տնտեսական աճը հիմնված չէ տեխնիկական առաջընթացի վրա, ապա կայուն չի կարող դառնալ[27]:

Չափազանց կարևոր խնդիր է երկրի տնտեսության համընդհանուր միջազգային մրցունակության մակարդակի բարձրացումը, որն, անշուշտ, առանձին ճյուղերի և ոլորտների թողարկած ապրանքների մրցունակության հանրագումարն է: Տնտեսական աճը որակյալ է կամ իրական, եթե ոչ միայն արդյունավետ է տնտեսությունը, այլև այն կամ նրա որոշ առաջատար ոլորտներ ունեն միջազգային մրցունակություն:

Արտադրանքի և ծառայությունների մրցունակությունը, ինչպես հայտնի է, պայմանավորվում է դրանց որակական հատկանիշներով և գներով: Չխորանալով այդ բազմագործուն հարցերի վերլուծության մեջ, մանավանդ որ թեմայից դուրս են, նշենք, որ հատկապես երկրի տնտեսության միջազգային մրցունակկությունը արտահայտվում է ապրանքների և ծառայությունների ներմուծման ու արտահանման կառուցվածքի միջոցով: Ակնհայտորեն, կարող է արտահանվել միջազգային շուկա այն ապրանքը, որն ունի բարձր որակական հատկանիշներ: Անգամ միևնույն երկրի ներսում տեղի է ունենում ապրանքների մրցունակության գնահատում՝ սպառողը նախընտրում է բարձրորակ արտադրանքը, իսկ ներկա ազատ շուկայական հարաբերությունների պայմաններում ապրանքաշրջանառության կառուցվածքով անուղղակիորեն կարող է գնահատվել հայրենի ապրանքների մրցունակության մակարդակը:

Դիտարկենք ՀՀ արտահանման և ներմուծման շարժը, կառուցվածքը և աշխարհագրությունը 2020-2023 թթ.:

---

* Տնտեսության ու գիտության փոխհարաբերությունների և դրանց համակարգված զարգացման մասին բազմիցս բարձրաձայնվել է առաջին հեղինակի կողմից: Տե՛ս, օրինակ, Սուվարյան Յու. Մ. Պետության զինված ուժերի կառավարման տեսական հիմնախնդիրները, ՀՀ ԳԱԱ Զեկույցներ, Եր., 2024, հատոր 124 (1), էջ 58-63

[27] Аджемоглу Д., Робинсон Дм. А., Почему одни страны богатые, а другие бедные. Происхождение власти, процветания и нищеты. М., изд.-во АСТ, 2016, էջ 183

ՀՀ արտահանման ծավալը զգալիորեն զիջում է ներմուծմանը (աղյուսակ 3), վերջինս 2020 և 2021 թթ. գերազանցել է արտահանմանը 1.8 անգամ, 2022-ին՝ 1.62, իսկ 2023-ին՝ 1.46 անգամ:

Աղյուսակ 3.

ՀՀ արտահանման և ներմուծման ծավալները 2020-2023 թթ. ըստ ապրանքային բաժինների (հազ. դոլար)[28]

	Արտահանում				Ներմուծում			
	2020 թ.	2021 թ.	2022 թ.	2023 թ.	2020 թ.	2021 թ.	2022 թ.	2023 թ.
Ընդամենը	2 536 993.5	30224 08.9	5 419 064.5	8 415 155.1	4 583 273.9	5 356 825.3	8 775 859.2	12 307 957.0
Այդ թվում՝								
կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	78 271.4	107 067.7	170 832.5	98 189.9	131 569.7	166 908.3	261 145.7	248 349.3
բուսական ծագման արտադրանք	136 210.6	186 565.3	225 944.0	182 576.3	255 755.1	289 327.3	421 935.1	356 687.0
կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	73.1	78.5	7 516.5	1 526.6	52 623.0	72 407.2	105 646.0	66 255.6
պատրաստի սննդի արտադրանք	562 943.1	623 968.0	882 197.1	885 061.9	397 609.9	434 288.6	579 422.2	617 800.4
հանքահումքային արտադրանք	814733.4	982 250.9	1 027 520.8	887 650.7	746 851.5	937 089.0	1 196 064.5	1 113 167.0
քիմիայի և դրա հետ կապված արդյունաբ. ճյուղերի արտադրանք	29 590.7	41 414.7	83 491.5	120 940.5	417 289.3	454 973.8	588 239.6	622 775.8
պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	15 557.1	19 703.2	63 111.5	66 443.4	196 684.3	234 346.4	327 685.5	351 811.6
կաշվի հումք, կաշի, մորթի ն դրանցից պատրաստված իրեր	5 166.5	5 878.9	11 130.5	21 988.4	15 340.9	24 185.4	28 444.1	42 344.0
փայտ և փայտյա իրեր	606.9	1 117.4	4 726.6	9 353.0	53 654.7	72 240.0	93 977.9	88 373.5
թուղթ և թղթից իրեր	1 256.9	1 690.2	6 742.2	4 771.2	87 233.5	87 351.5	137 730.2	147 545.8

[28] Հայաստանի Հանրապետության սոցիալ–տնտեսական վիճակը 2021թ հունվար-դեկտեմբեր, էջ 138, 2023թ հունվար-դեկտեմբեր, էջ 159, https://armstat.am/file/article/sv_12_21a_411.pdf, https://armstat.am/file/article/sv_12_23a_411.pdf

մանածագործական իրեր	133 532.6	183 498.7	224 409.9	357 657.2	245 183.4	301 547.0	397 899.9	648 713.9
կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	3 012.5	4 697.1	12 640.8	41456.5	45 199.0	59 838.2	76 689.9	116 616.9
իրեր քարից, գիպսից, ցեմենտից	20 124.5	20 273.8	37 247.2	37 209.3	93 633.9	109 322.4	160 974.4	174 657.5
թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	369 235.2	333 049.5	989 410.8	3 211 869.9	143 701.1	248 473.7	691 595.9	2 302 882.6
ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	229 198.6	364 445.8	460 401.4	452 236.7	360 824.8	390 833.5	624 041.4	602 692.5
մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	42 359.3	59 494.8	718 756.0	1 290 921.6	878 361.4	898 228.3	1 728 318.9	2 459 173.6
վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	14 057.1	38 697.8	332 562.0	548 276.8	198 564.3	306 544.4	957 936.9	1 832 380.6
սարքեր և ապարատներ	61 681.3	34 292.4	117 571.1	142 955.8	112 847.5	123 360.7	196 927.5	265 833.7
տարբեր արդյունաբերական ապրանքներ	18 802.8	13 236.0	39 519.5	53 315.9	150 034.4	145 287.2	191 855.2	243 560.7
արվեստի ստեղծագործություններ	580.0	988.0	3 332.7	753.5	312.2	272.2	9 328.4	6 334.9

Արտահանվել է պատրաստի սննդի և հանքահումքային արտադրանք, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր, թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր: Արտահանման ծավալում դրանց տեսակարար կշիռը 2023 թ. համապատասխանաբար կազմել է 10.5, 10.6 և 38.2 տոկոս: Ներմուծման ծավալում ևս գերակշռում են պատրաստի սննդի արտադրանքը՝ 5.0 %, հանքահումքային արտադրանքը՝ 9%, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը, թանկարժեք մետաղները և դրանցից իրերը՝ 18.7 տոկոս[29]: Ներմուծվող ապրանքների ցանկում են քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը (5.1%), պլաստմասսա և դրանցից իրերը, կաուչուկ և դրանցից իրերը (2.9%), մանածագործական արտադրանքը (5.3%), սարքերը և ապարատները, տարբեր արդյունաբերական ապրանքները (4.1 %): Ուշագրավ է,

[29] Աղյուսակի տվյալներով թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից իրերի արտահանումը և ներմուծումը 2023 թ. 2022 թ. համեմատ աճել են 3.2 և 3.3 անգամ: Բարձր տեմպերով աճել են նաև մեքենաների, սարքավորումների և մեխանիզմների արտահանումը (1.8 անգամ) և ներմուծումը (1.42 անգամ): Դրանք օրինաչափ կամ կայուն միտումներ չեն, ուստի հանգամանորեն չեն մեկնաբանվում:

որ ունենալով գյուղատնտեսության զարգացման հնարավորություններ, ավելի շատ ներմուծում ենք բուսական ծագման արտադրանք (356.7 հազ. դոլար), քան արտահանում (182.6 հազ. դոլար)։ Նույն պատկերն է Նաև կենդանական ծագման արտադրանքի առումով։ Սա նշանակում է, որ գոյություն ունեն պարենային անվտանգության ռիսկեր։

ՀՀ ՎԿ 2023 թ. համար առանձին ներկայացրել է բարձր տեխնոլոգիական ապրանքների արտաքին առևտրի ցուցանիշները ըստ բարձր տեխնոլոգիական ապրանքների հավաքական խմբավորման (աղյուսակ 4)։

Աղյուսակ 4.

Բարձր տեխնոլոգիական ապրանքների արտահանումը և ներմուծումը 2023թ.

(հազ. ԱՄՆ դոլար)[30]

№	Ապրանքների հավաքական խմբերը	Արտահանում	Ներմուծում
1.	Բժշկական պատրաստուկներ և գործիքներ	20 958,8	74 862,8
2.	Գիտական սարքավորումներ և գործիքներ	72 675,4	169 698,0
3.	Էլեկտրական սարքավորումներ	18 852,0	70 508,0
4.	Էլեկտրոնիկա և հեռահաղորդակցություն	664 467,5	916 623,4
5.	Համակարգչային սարքավորումներ	148 130,1	205 812,7
6.	Ոչ էլեկտրական սարքավորումներ	5 686,8	31 161,5
7.	Քիմիական արդյունաբերության ապրանքներ	10 539.5	34 854 1
8.	Օդատիեզերական արդյունաբերության ապրանքներ	29 976,8	70 184,3
	Ընդամենը	971 286,9	1 573 704,9

Աղյուսակ 4-ում նշված ապրանքների արտահանման ծավալը ՀՀ-ից արտահանման ընդհանուր ծավալում կազմել է 11 %, ներմուծման ցուցանիշը՝

[30] ՀՀ ՎԿ, Վիճակագրական տվյալների բազա, Բարձր տեխնոլոգիական ապրանքների արտաքին առևտրի ցուցանիշներն ըստ բարձր տեխնոլոգիական ապրանքների հավաքական խմբավորման, 2023 https://armstat.am/am/?nid=967

12.6 %: Ընդհանուր առմամբ միտումը դրական է, բայց՝ անբավարար, մանավանդ ներմուծումը գերազանցում է արտահանմանը 1.67 անգամ:

Այժմ ներկայացնենք ՀՀ արտաքին տնտեսական կապերի աշխարհագրությունը: Մասնավորապես նշենք Հայաստանի հիմնական առևտրային գործընկերներին 2019-2023թթ. կտրվածքով (աղյուսակ 5).

Աղյուսակ 5.

ՀՀ արտաքին առևտրի կատուցվածքն ըստ երկրների, 2019-2023, %[31]

Երկիր	2019		2020		2021		2022		2023	
	Արտ.	Ներմ.	Արտ.	Ներմ.	Արտ.	Ներմ.	Արտ.	Ներմ.	Արտ.	Ներմ.
ԱՊՀ, այդ թվում	30.3	33.7	29.3	40.8	31	41.8	48	35.9	43.4	34.9
ԵԱՏՄ, այդ թվում	28.8	30.7	28	37.6	29.4	38.7	47.2	34.6	42.9	33.9
-Ռուսաստան	27.8	29.7	26.8	36.1	28	37.2	45.4	32.9	40.6	32.9
–Բելառուս	0.7	0.9	0.8	1.3	0.9	1.3	1.4	1.4	1.1	0.8
-Ղազախսան	0.2	0.1	0.3	0.1	0.4	0.2	0.3	0.3	0.8	0.3
-Ղրղզստան	0.1	0	0.1	0	0.1	0	0.1	0	0.3	0
ԵՄ	22.1	20.8	16.9	20.4	21.7	19.2	14.3	20.2	8.4	18.3
Բուլղարիա	7.9	0.6	5.9	0.6	6.6	0.6	3.9	0.4	1.2	0.4
Գերմանիա	2.6	4.3	2.2	5.3	2.6	4.2	2	5.2	1	4.6
Նիդերլանդներ	5.8	2.4	3.9	1.5	6.3	1.6	4	1.6	2.8	1.5
Իտալիա	2.3	3.3	1.6	3.6	2.1	3.6	1.2	2.8	0.8	2.6
Այլ ԵՄ երկրներ	3.5	10.2	3.3	9.4	4.1	9.2	3.2	10.2	2.6	9.2
Այլ երկրներ, այդ թվում՝	47.6	45.5	53.8	38.8	47.3	39	37.7	43.9	48.2	46.8
Արաբական Միացյալ Էմիրություններ	2.2	4.2	4.2	2.1	2.5	2.3	9.9	5.3	26.4	5
ԱՄՆ	2	6.5	2.7	1.7	2.7	2.6	1.4	5.2	0.6	6.8
Չինաստան	7.3	8.4	11.4	9.5	13	10.3	6.8	8	5.1	7.7
Շվեյցարիա	17.3	1.1	17.9	0.7	11.9	0.6	4.7	1.1	1	0.6
Իրանի Իսլամական հանրապետութ.	3.2	5.9	3.3	6.9	2.2	8.2	2	6.9	1.1	5
Վրաստան	2.6	8.8	2.3	7	2.3	6.6	3	8.2	1.7	7.7
Այլ երկրներ	13	10.6	12	10.9	12.7	8.4	9.9	9.2	12.3	14

[31] Հայաստանի Հանրապետության սոցիալ–տնտեսական վիճակը 2019թ. հունվար-դեկտեմբեր, էջ 135-136,
Հայաստանի Հանրապետության սոցիալ–տնտեսական վիճակը 2021թ. հունվար–դեկտեմբեր, էջ 136-137,
Հայաստանի Հանրապետության սոցիալ–տնտեսական վիճակը 2023թ. հունվար–դեկտեմբեր, էջ 157-158

Հայաստանը աշխատում է իր առևտրային գործընկերների ու արտահանման դիվերսիֆիկացիայի վրա, որպեսզի կրճատի մի շարք շուկաներից կախվածությունը: Հայաստանը անդամակցում է Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ), ինչն ազդում է վերջինիս առևտրի դինամիկայի վրա՝ ներառյալ անդամ երկրների հետ մաքսատուրքերն ու առևտրային հարաբերությունները կարգավորող ակտերը: Ջանքեր են գործադրվում արդյունավետ առևտրի ու առևտրային ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ, որոնց հիմնական նպատակը արտահանման հնարավորությունների ընդարձակումն ու արտաքին ներդրումների ներգրավումն է:

Եզրակացություն: Հայաստանի արտաքին առևտրի հաշվեկշիռը վերջին հինգ տարիներին եղել է բացասական: Երկիրը բախվել է այնպիսի մարտահրավերների, ինչպիսիք են համաշխարհային տնտեսական խափանումները և տարածաշրջանային աշխարհաքաղաքական խնդիրները: Այնուամենայնիվ, շարունակական ջանքեր են գործադրվում առևտրային գործընկերների դիվերսիֆիկացման և տնտեսական պայմանների բարելավման ուղղությամբ՝ նպաստելով արտահանման ծավալների աստիճանական աճին:

Ամփոփելով պետք է ընդգծել տնտեսության զարգացման որակի և արդյունավետության կարևորությունը կայուն զարգացման հասնելու գործընթացում: Տնտեսական աճի որակն ավելի կարևոր է, քան միայն քանակական ցուցանիշները, քանի որ այն ուղղակիորեն ազդում է բնակչության կյանքի որակի վրա, ապահովում է սոցիալական համախմբվածություն և այլն: Զարգացման արդյունավետությունը պետք է արտացոլվի ռեսուրսների ճիշտ օգտագործմամբ, բարձր արտադրողականությամբ և գիտատար տեխնոլոգիական նորարարություններով, որոնք կկրճատեն ծախսերը և մեծացնեն մրցունակությունը: Նմանապես, զարգացման որակը պահանջում է համապարփակ մոտեցում, որը ներառում է մարդկային կապիտալի ներդրումներ, ինչպես նաև տնտեսության զարգացման համար անհրաժեշտ է ներդաշնակություն ստեղծել քանակական աճի, որակական բարելավումների և ռեսուրսների արդյունավետ օգտագործման միջև, ինչը հնարավորություն կտա ապահովել երկարաժամկետ կայունություն և բարեկեցություն բոլոր շերտերի համար:

Այսպիսով, տնտեսական աճի բարձր որակը կամ իրական և կայուն լինելը կարող է ապահովվել, եթե տնտեսությունն արդյունավետ և հարաբերական ինքնաբավ է, երկրի անվտանգային, այդ թվում՝ պարենային խնդիրները լուծվում են, գործադրվում են հեռանկարային բարձր գիտատար արդյունաբերական տեխնոլոգիաներ, իսկ թողարկվող ապրանքները գերազանցապես ունեն միջազգային մրցունակություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սուվարյան Յու. Մ., «Տնտեսական զարգացման որակական բնութագրիչները և գերակայությունները», Լրաբեր, 2019, թ. 2
2. Самуэльсон П. А, Нордхаус В.Д., Экономика, М., «Лаборатория базовых знаний», 2000, էջ 570-579:
3. Atkinson, A.B. (1970) On the Measurement of Inequality. Journal of Economic Theory, 2, 244-263.
http://dx.doi.org/10.1016/0022-0531(70)90039-6
4. Pearce, D., & Turner, R. K. (1990). Economics of natural resources and the environment. Baltimore: Johns Hopkins University Press.
5. Dasgupta, P. (2001). Human Well-Being and the Natural Environment. Oxford University Press.
https://doi.org/10.1093/0199247889.001.0001
6. Daly, H.E. (1996) Beyond Growth, The Economics of Sustainable Development. Beacon Press, Boston.
7. Costanza, R., d'Arge, R., de Groot, R. et al. The value of the world's ecosystem services and natural capital. Nature 387, 253–260 (1997).
https://doi.org/10.1038/387253a0
8. Solow, R. M. (1957). Technical Change and the Aggregate Production Function. The Review of Economics and Statistics, 39(3), 312–320. https://doi.org/10.2307/1926047
9. Mankiw NG, Romer D, Weil D. A Contribution to the Empirics of Economic Growth. Quarterly Journal of Economics. 1992;107 (May) :407-437.
10. N. Kaldor.Causes of the Slow Rate of Economic Growth of the UnitedKingdom. An Inaugural Lecture.London, Cambridge UniversityPress, 1966, 40 p., 5/– net in U.K.
11. Jorgenson, Dale. Productivity, Volume 1: Postwar U.S. Economic Growth. The MIT Press, 1995.
12. World Employment and Social Outlook: Trends 2016, International Labour Office – Geneva: ILO, 2016, https://www.ilo.org/publications/world-employment-and-social-outlook-trends-2016
13. Becker, G.S. (1964) Human Capital: A Theoretical and Empirical Analysis, with Special Reference to Education. University of Chicago Press, Chicago.
14. Friedman, M. (1962). Capitalism and freedom. Chicago: University of Chicago Press.
15. Blanchard, Olivier, and Lawrence F. Katz. 1999. "Wage Dynamics: Reconciling Theory and Evidence." American Economic Review, 89 (2): 69–74. DOI: 10.1257/aer.89.2.69
16. UNDP (United Nations Development Programme). 1990. Human Development Report 1990: Concept and Measurement of Human Development. New York.
17. Sen A. Development as Freedom. New York: Alfred Knopf; 1999., http://www.c3l.uni-oldenburg.de/cde/OMDE625/Sen/Sen-intro.pdf

18. C. A. Hidalgo et al. ,The Product Space Conditions the Development of Nations.Science317,482-487(2007).DOI:10.1126/science.1144581
19. Rodrik, D. (2008) The Real Exchange Rate and Economic Growth. Brookings Papers on Economic Activity, Vol. 2, 365-412. http://dx.doi.org/10.1353/eca.0.0020
20. Hausmann, Ricardo & Rodrik, Dani, 2003. "Economic development as self-discovery," Journal of Development Economics, Elsevier, vol. 72(2), pages 603-633, December.
21. Fritjof Capra and Hazel Henderson, Outside insights: Qualitative Growth, 2013, p. 10
22. Лопатников Л. И, Экономико-математический словарь, М., Дело, 2003, с. 419
23. Мескон М., Альберт М., Хедоури Ф., Основы менеджмента. М., “Дело”, 2000, с. 48-50
25. Блэк Дж, Экономика: толковый словарь, М., ИНФРА-М, 2000, с. 540
27. Հարարի Յու. Ն. Sapiens. Մարդկության համառոտ պատմություն, Ե., 2020, էջ 318-319
28. Аджемоглу Д., Робинсон Дм. А., Почему одни страны богатые, а другие бедные. Происхождение власти, процветания и нищеты. М., изд.-во АСТ, 2016, էջ 183
29. ՀՀ Վիճակագրական կոմիտե, https://www.armstat.am/am/

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ–ՈՒՄ

ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ
ՄԵՐԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Համառոտագիր

Տնտեսական զարգացման որակը արտահայտվում է արտադրության, սպառման և ծառայությունների ոլորտներում շարունակական բարելավմամբ, որն ապահովում է բնակչության կյանքի որակի բարձրացում և բնապահպանական կայունություն: Որակյալ տնտեսական զարգացումը ներառում է կայուն աճի, սոցիալական արդարության, տեխնոլոգիական նորարարությունների, կրթության և առողջապահական ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում: Զարգացման արդյունավետությունը պայմանավորված է ռեսուրսների օպտիմալ օգտագործմամբ, արտադրողականության բարձրացմամբ և տնտեսության կառուցվածքի արդիականացմամբ: Սա ենթադրում է ոչ միայն տնտեսական աճի տեմպերի ավելացում, այլ նաև գործառնական արդյունավետության, կազմակերպությունների մրցունակության և ներդրումային միջավայրի բարելավում:

Հետազոտությունում ներկայացվում են տնտեսության զարգացման որակի և արդյունավետության հիմնական գաղափարները՝ ներկայացնելով զարգաց-

ման գործընթացների առանձնահատկությունները, որոնք ուղղված են ոչ միայն քանակական աճին, այլ նաև որակական բարելավմանը:

Հոդվածում հանգամանորեն քննարկվում է ՀՆԱ–ի և ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքը, այդ թվում նաև բարձր տեխնոլոգիական ապրանքների արտահանումը և ներմուծումը՝ ընդգծելով գիտատար արդյունաբերական տեխնոլոգիաների ու գիտելիքի դերը՝ որպես տնտեսական զարգացման որակի կարևոր գործոններ:

Բանալի բառեր – տնտեսական աճ, որակ, արդյունավետություն, ՀՆԱ, արտահանում, ներմուծում, զարգացում, գնահատում

КАЧЕСТВО И ЭФФЕКТИВНОСТЬ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РА

ЮРИЙ СУВАРЯН
МЕРИ МАНУЧАРЯН

Аннотация

Качество экономического развития выражается в постоянном совершенствовании сфер производства, потребления и услуг, что обеспечивает повышение качества жизни населения и экологическую стабильность. Качественное экономическое развитие включает устойчивый рост, социальную справедливость, технологические инновации и расширение доступа к образованию и медицинским услугам. Эффективность развития определяется оптимальным использованием ресурсов, ростом производительности и модернизацией структуры экономики. Это предполагает не только увеличение темпов экономического роста, но и улучшение операционной эффективности, конкурентоспособности организаций и инвестиционной среды.

В исследовании представлены основные представления о качестве и эффективности экономического развития, представлены особенности процессов развития, направленных не только на количественный рост, но и на качественное улучшение.

В статье также рассматривается структура ВВП, структура внешней торговли РА, включая экспорт и импорт высокотехнологичной продукции, подчеркивая роль научных промышленных технологий и знаний как важных факторов качества экономического развития.

Ключевые слова – экономический рост, качество, эффективность, ВВП, экспорт, импорт, развитие, оценка

THE QUALITY AND EFFICIENCY OF ECONOMIC DEVELOPMENT IN RA

YURI SUVARYAN
MERI MANUCHARYAN

Abstract

The quality of economic development is expressed by continuous improvement in the spheres of production, consumption and services, which ensures an increase in the quality of life of the population and environmental stability. Quality economic development includes sustainable growth, social justice, technological innovation, and increased access to education and health services. The efficiency of the development is determined by the optimal use of resources, the increase in productivity and the modernization of the structure of the economy. This implies not only an increase in the rate of economic growth, but also an improvement in operational efficiency, competitiveness of organizations and the investment environment.

The research presents the main ideas of the quality and efficiency of economic development, presenting the features of development processes aimed not only at quantitative growth, but also at qualitative improvement.

The article also discusses the structure of the GDP, the structure of RA foreign trade, including the export and import of high-tech products, emphasizing the role of scientific industrial technologies and knowledge as important factors of the quality of economic development.

Key words – economic growth, quality, efficiency, GDP, export, import, development, evaluation